ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
Կրթության և գիտության նախարարի
26 դեկտեմբերի 2017թվականի
Թիվ 1576 – Ա/2 հրամանով
Կրթության և գիտության նախարար
_____ Լ. ՄԿՐՏՉՅԱՆ

Տպագրված է ընդամենը 4 օրինակ
ՕՐԻՆԱԿ 3

ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
Իրավաբանական անձանց պետական
Ռեգիստրի կողմից 16. 01. 2018
Գրանցման թիվ 271 120.1001062
Վկայական _____
Հարկ վճարողի հաշվառման համար
01503265
16. 01 2018թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան
2017 թվական

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի հենակետային բժշկական քոլեջ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) համարվում է շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն՝ պետական բաժնետիրական ընկերություն, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացող որոշակի թվով բաժնետոմսերի:

2. Ընկերության հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինն է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Լիազորված մարմին):

3. «Երևանի հենակետային բժշկական քոլեջ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է ««Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմավորման ձևով վերակազմակերպելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1437-Ն որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայության «Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Մյասնիկյանի տարածքային բաժնի կողմից 08.04.2003թ., գրանցման համարը՝ 273.210.03482) վերակազմավորման ձևով վերակազմակերպելու արդյունքում: «Երևանի հենակետային բժշկական քոլեջ» փակ բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայության «Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

4. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման պահից և դադարում է լուծարման ավարտի պահից:

5. Ընկերության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ (այսուհետ Օրենք), «Կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, սույն կանոնադրությամբ, և այլ իրավական ակտերով:

6. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կարգավորող այլ նորմեր, քան բովանդակում է սույն կանոնադրությունը, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

7. Բաժնետիրոջ (լիազորված մարմնի) և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորում են օրենքով և սույն կանոնադրությամբ:

8. Ընկերությունն իր պարտականությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ բաժնետիրոջ պարտավորությունների համար: Ընկերության բաժնետերերը Ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

9. Պետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունը իր հերթին պատասխանատվություն չի կրում պետության և համայնքների պարտավորությունների համար:

10. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ «ԵՐԵՎԱՆԻ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՓԲԸ
Կրճատ՝ «ԵՀԲՔ» ՓԲԸ
Ռուսերեն լրիվ՝ «Ереванский базовый медицинский колледж» ЗАО
Ռուսերեն կրճատ՝ «ЕБМК» ЗАО
Անգլերեն լրիվ՝ «Yerevan Basic Medical College» CJSC
Անգլերեն կրճատ՝ «YBMC » CJSC

11. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ 0009 , Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Կորյունի փողոց 10:

II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

12. Ընկերության գործունեության հիմնական առարկան միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է: Ընկերությունը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել նաև հանրակրթական և (կամ) նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր:

13. Ընկերությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով՝

1) իրականացնում է ուսանողների և ունկնդիրների ընդունելություն, ապահովում է նրանց ուսումնական գործընթացի, ընթացիկ և պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպումն ու անցկացումը.
2) կրթական ծրագրերի առավել արդյունավետ յուրացման նպատակով ուսուցման առաջավոր ձևերի, մեթոդների և միջոցների ընտրությամբ քոլեջի ուսանողների համար ստեղծում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ.
3) կարող է իրականացնել մեծահասակների կրթության և ուսուցման ծրագրեր.
4) ապահովում է դասախոսների, արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստումը, որակավորման բարձրացումը.
5) աջակցում է ընկերության ուսանողական խորհրդի աշխատանքներին, ինչպես նաև ընկերության ուսանողների մասնակցությանը ընկերության կառավարմանը և ընկերության կողմից իրականացվող ծրագրերում.
6) միջոցներ է ձեռնարկում ընկերության ուսանողների ինքնազարգացման, առողջության պահպանման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման և սննդի կազմակերպման համար.
7) իրականացնում է միջին մասնագիտական կրթության զարգացմանը նպաստող ծրագրեր:

14. Ընկերության գործունեության հիմնական նպատակներն են՝

1) կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ դառնալ Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի զարգացման առավել մեծ ներուժ ունեցող լիարժեք կառույց՝ գերազանցության և տարածաշրջանային ռեսուրսային կենտրոն՝ ստանձնելով բարեփոխումներն առաջնորդողի, տարածողի դերը.
2) երկրի զարգացման պահանջների բավարարմանը և մասնագիտական կրթության համակարգի զարգացմանն ուղղված մասնագիտական, կառավարչական, ուսումնամեթոդական, գիտամանկավարժական, մշակութային, նյութատեխնիկական ներուժի ձևավորմանը նպաստելը, ինչպես նաև հարակից ուսումնական հաստատությունների զարգացմանն օժանդակելը.
3) մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում նորարարությունների, ինչպես նաև տեղայնացված առաջավոր միջազգային փորձի ներդրումը, զարգացումն ու տարածումը, կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգի ներդրումը և տեղայնացումը, կրթության գլոբալ համակարգերին ինտեգրումը.
4) աշխատանքային շուկայում պահանջարկ ունեցող որակյալ մասնագետների պատրաստումը (վերապատրաստումը, մասնագետների որակավորման բարձրացումը և վերաորակավորումը).
5) ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու ակտիվ քաղաքացու համակողմանի ձևավորումը.

6) ուսումնառության ընթացքում անհատի մասնագիտական կրթության, նրա հոգևոր ու ֆիզիկական զարգացման պահանջմունքների բավարարումը.
7) մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվության արդյունավետ համակարգի ներդրումը.
8) սոցիալական գործընկերության համակարգում երկխոսության խթանմանը նպաստելը:

15. Ընկերությունը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության, հանրակրթության, լրացուցիչ կրթության կազմակերպում.
2) արտադպրոցական դաստիարակության կազմակերպում.
3) նախապատրաստական դասընթացների կազմակերպում.
4) մասնագիտական ուսուցման և այլ դասընթացների կազմակերպում.
5) կադրերի վերապատրաստում, վերաորակավորում և որակավորման բարձրացում.
6) ստեղծագործական, հետազոտական, փորձարարական և փորձագիտական գործունեության իրականացում.
7) ուսումնաարտադրական, արտադրական գործունեություն և սպասարկման ծառայությունների իրականացում.
8) ուսումնամեթոդական նյութերի, ձեռնարկների մշակում.
9) կրթական, մշակութային, սոցիալական, մարզական և այլ բնույթի միջոցառումների կազմակերպում և (կամ) սպասարկում.
10) հրատարակչական գործունեություն.
11) ընկերության ուսանողների և աշխատողների հանրային սննդի կազմակերպում.
12) ընկերության ուսանողների և աշխատողների համար հանրակացարանային ծառայությունների կազմակերպում.
13) ընկերության ուսանողների և աշխատողների հանգստի կազմակերպում.
14) մշակութային գործունեության իրականացում.

16. Ընկերությունը կրթական ծրագրերն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորման, պետական հավատարմագրման դեպքում: Ընկերությունը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ նաև հասարակական հավատարմագրում:

17. Լիազորված մարմնի համաձայնությամբ Ընկերությունը կարող է իրականացնել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած այլ գործունեություն, որն առընչվում է ընկերության կանոնադրական նպատակներին և նպաստում է նրա զարգացմանը:

18. Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19. Ընկերությունը առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է:

20. Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

21. Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, օրենքով սահմանված կարգով բացված բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների արտարժույթով:

22. Ընկերությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք: Ընկերությունը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացնող այլ միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և անհատականացնող այլ միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել ռուսերեն և (կամ) անգլերեն լեզուներ:

23. Ընկերությունը իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրության կամ այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք անսահմանափակ թվով անձանց:

24. Ընկերությունն իրավունք ունի ունենալ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ տնտեսական ընկերություններ:

25. Օտարերկրյա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ դրանցում մասնակցությունը կատարվում է դրանց գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

26. Ընկերությունն իրավունք ունի սույն կանոնադրության դրույթների, Օրենսգրքի, Օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

27. Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկ:

28. Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Ընկերության լիազորագրերի հիման վրա:

29. Ընկերությունն իրավունք ունի՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,

2) ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով,

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ,

5) ինքնուրույն ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով՝ նրա հետ մտնելով պայմանագրային հարաբերությունների մեջ,

6) ունենալ միջոցներ արտարժույթով: Օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել (այդ թվում՝ ստանալ որպես արտաքին տնտեսական գործունեության արդյունք) արտարժույթով միջոցներ և ինքնուրույն տնօրինել, այդ թվում՝ վաճառել պետությանը, իրավաբանական անձանց և (կամ) քաղաքացիներին,

7) օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների,

8) ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին,

9) ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասը,

10) օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

30. Ընկերությունը պարտավոր է

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն,
2) օրենքով նախատեսված դեպքերում ամեն տարի հրապարակել իր տարեկան հաշվետվությունը և հաշվապահական հաշվեկշիռը,
3) աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,
4) ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության պետական գրանցման վկայականի, կանոնադրության, կանոնադրությունում կատարված լրացումների և փոփոխությունների, կանոնադրության նոր խմբագրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, կնքած պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը իր գտնվելու վայրում,
5) անհապաղ տեղեկություններ հապարակել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը ձեռք բերելու մասին,
6) Կկրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

31. Ընկերության ընդհանուր կապիտալը՝ 14841.645 հազ. դրամ է, որից կանոնադրական կապիտալը՝ 14000.0 հազ. դրամ, որը համապատասխանում է 1400 հատ հասարակ բաժնետոմսի, յուրաքանչյուրը՝ 10000 դրամ անվանական արժեքով և ընկերության գլխավոր պահուստ և (կամ) երաշխիքային հիմնադրամ՝ 841.645 հազ. դրամ.

32. Ընկերությունը կարող է կանոնադրական կապիտալի չափը փոխել բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

33. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է ավելացվել Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե նախկինում

տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ իրացված և վճարված են:Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությունն իր կանոնադրական կապիտալը չի կարող ավելացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

34. Ընկերությունը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր տնտեսական գործունեությամբ առաջացած վնասները ծածկելու համար:

35. Ընկերությունն իր ամենամյա գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը՝ իրեն պատկանող կանոնադրական կապիտալի և պահուստային կապիտալի գումարը գերազանցող (զուտ ակտիվները) կամ դրա մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ:

36. Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը կարող է կատարվել բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ կամ բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցմամբ, այդ թվում՝ Օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռքբերման և մարմամբ:

37. Ընկերության կանոնադրական կապիտալը թույլատրվում է նվազեցնել Օրենքով սահմանված կարգով՝ բոլոր պարտատերերին գրավոր տեղեկացնելով: Այդ դեպքում ընկերության պարտատերերն իրավունք ունեն պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում:

38. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման և Ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշումներն ընդունվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից կամ Լիազորված մարմնի որոշմամբ՝ միայն Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման առկայության դեպքում:

39. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման պատճառով բաժնետիրոջ վճարումները կատարվում են Ընկերության կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումից հետո:

V.ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ

40. Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված արժեթղթեր:

41. Ընկերությունն իրավունք ունի թողարկել և տեղաբաշխել միայն ոչ փաստաթղթային ձևի հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

42. Ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխվում են Ընկերության բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման տեսքով:

43. Բաժնետոմսն անբաժանելի է:

44. Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից 1 տարվա ընթացքում:

45. Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է իրականացվել դրամով, արժեթղթերով, այլ գույքով կամ գույքային իրավունքներով, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներով:

46. Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռքբերման ժամանակ վճարում են լրիվ արժեքով:

47. Ինչպես Ընկերության հիմնադրամ, այնպես էլ բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխման ժամանակ բաժնետոմսերի դիմաց վճարվող գույքի դրամական գնահատականը սահմանվում է պետական կառավարման լիազորված մարմնի կողմից և ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից:

48. Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը (չվճարված կամ հետ վերադարձված) չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվառկման ժամանակ, այդ բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Այդ բաժնետոմսերը պետք է իրացվեն Ընկերության կողմից՝ դրանք Ընկերությանը փոխանցելու պահից մեկ տարվա ժամկետում: Հակառակ դեպքում՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է որոշում ընդունի նշված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխման մասին:

49. Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ՝ ոչ պակաս կանոնադրական կապիտալի 15 տոկոսից:

50. Եթե պահուստային հիմնադրամը կազմում է Ընկերության կանոնադրության սահմանվածից ավելի փոքր մեծություն, հատկացումներն այդ կապիտալին կատարվում են շահույթից՝ առնվազն 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերություններից ստացվող միջոցներից:

51. Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և

Ընկերության բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները այդ նպատակին չեն բավարարում:

52. Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար (բացի օրենքով սահմանված դեպքերից):

53. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև սպառման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ կապիտալներ:

54. Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվեկշռի կամ աուդիտորական վերստուգման տվյալներով՝ օրենքով և այլ իրավական ակտերի սահմանված կարգով:

55. Եթե Ընկերության գոյության երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքն Ընկերության կանոնադրական կապիտալից փոքր է, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը:

56. Եթե սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցման կամ Ընկերության լուծարման մասին որոշում չի ընդունվել, ապա Ընկերության բաժնետերերը, պարտատերերը, ինչպես նաև պետության կողմից լիազորված մարմիններն իրավունք ունեն պահանջել Ընկերության լուծարումը դատական կարգով:

VI. ՀԻՄՆԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

57. Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:

58. Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը իրավունք ունի՝

1) մասնակցել Ընկերության կառավարմանը,
2) ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
3) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ բացի գաղտնի փաստաթղթերից, այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, հաշվապահական գրքերին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը,
4) պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ Ընկերության գործունեությանը վերաբերող հաշվետվությունները և գաղտնի ներկայացնող

փաստաթղթերը ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգում պահանջող բաժնետերերը,

5) ընկերության ընդհանուր ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,

6) ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը, առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այլ բան չի նախատեսված,

7) օրենսդրությամբ սահմանված կարգով օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը,

8) օգտվելով օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

59. Բաժնետերը պարտավոր է չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացող տեղեկություններ:

60. Բաժնետերը սույն կանոնադրության 58-րդ կետով սահմանված իր իրավունքներն իրականացնում է Լիազորված մարմնի միջոցով, բացի օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերի:

VII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

61. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց միջանկյալ (եռամսյակային, կիսամյակային) և (կամ) տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

62. Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից):

63. Ինչպես տարեկան, այնպես էլ միջանկյալ շահութաբաժինների վճարման, շահութաբաժինի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից կամ Լիազորված մարմնի որոշմամբ Լիազորված մարմնի կողմից սահմանված կարգի համաձայն:

64. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին: Այդ որոշումների գործողության ժամկետը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, բայց չի կարող մեկ տարուց ավելի լինել:

65. Շահութաբաժինների վճարման ամսաթիվը սահմանում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

66. Ընկերությունն իրավունք չունի շահութաբաժիններ հայտարարել և վճարել եթե՝

1) լրիվ չի վճարել Ընկերության կանոնադրական կապիտալը,
2) շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկացման) հատկանիշներին, կամ նշված հատկանիշները ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով,
3) Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից, կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

VIII.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

67. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք օրենքով չեն սահմանվել որպես նրա իրավասություն:

68. Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր ժողով՝ բաժնետերերի տարեկան ժողով:

69. Ընկերության բաժնետերերի տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո 4 ամսվա ընթացքում:

70. Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

71. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասության են պատկանում՝

1) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
2) Ընկերության վերակազմակերպումը.
3) Ընկերության լուծարումը.
4) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

5) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

6) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

7) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

8) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

9) Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

10) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

11) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

12) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի.

13) Օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի

Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.
14) ժողովի վարման կարգը.
15) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.
16) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.
17) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.
18) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ Օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.
19) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ Օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում.
20) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.
21) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի կամ անդամի, տնօրենի,) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.
22) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.
23) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.
24) հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը.
25) հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը.
26) Օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը.
27) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով որոշումների ընդունումը:

72. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի կանոնադրության 73-րդ կետում սահմանված դեպքերից:

73. Սույն կանոնադրության 71-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, ենթակետերով սահմանված հարցերի մասին որոշումներն ընդունվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երեք քառորդով:

74. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց ժողովի գումարման՝ հեռակա կարգով՝ քվեարկությամբ (Լիազորված մարմնի հարցման միջոցով) կամ Լիազորված մարմնի որոշմամբ:

75. Սույն կանոնադրության 71-րդ կետի 2-րդ, 3-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված հարցերի վերաբերյալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր որոշումներն ընդունվում են (այդ թվում՝ Լիազորված մարմնի որոշումները) միայն Հայաստանի Հանրապետության Կառավարության համապատասխան որոշման առկայության դեպքում:

76. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն Ընկերության Լիազորված մարմինը կամ նրա կողմից լիազորված անձը՝ Լիազորված մարմնի կողմից սահմանված լիազորությունների շրջանակում, Ընկերության տնօրենը, ինչպես նաև վերստուգող հանձնաժողովի անդամները և աուդիտն իրականացնող անձը:

77. Ընկերության տնօրենը, ինչպես նաև վերստուգող հանձնաժողովի անդամները և աուդիտն իրականացնող անձը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

78. Ընկերության տնօրենների խորհուրդը (դիտորդ խորհուրդ) (այսուհետ՝ խորհուրդ), որի անդամների թիվը 15-ն է, իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք Օրենքով և կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը: Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

79. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
2) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ Օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի,
3) ժողովների օրակարգի հաստատումը,
4) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթիվ, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ Օրենքի X գլխի դրույթներին համապատասխան,
5) Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը,
6) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նրան տրված են այդպիսի լիազորություններ,
7) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ,

8) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ Օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով,
9) Օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը,
10) տնօրենի, ընկերության աշխատողների վարձատրության, ծախսերի փոխհատուցումների վճարման կարգն ու պայմանները,
11) Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,
12) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,
13) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,
14) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,
15) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,
16) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,
17) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը,
18) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,
19) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ Օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում,
20) Օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը,
21) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
22) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
23) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը,
24) Օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

80. Խորհուրդը կարող է՝

1) ընկերության ուսանողների կրթության և դաստիարակության որակի [illegible] մանկավարժական կազմի աշխատողների մանկավարժական վարպետության բարձրացման, ինչպես նաև առաջավոր փորձի կիրառման նպատակով, տնօրենի առաջարկությամբ, ստեղծել քոլեջի մանկավարժական, [illegible] մասնագիտական խորհուրդներ, ինչպես նաև ամբիոնների, [illegible] և առարկայական հանձնաժողովներ,
2) [illegible] դրանց կազմերը, իրավասությունը և գործունեության կարգերը,

3) հաստատել ընկերության տնօրենի և մանկավարժների գնահատման իրականացմանն ուղղված միջոցառումները,
4) սահմանել մեկ ուսանողի համար ուսման վճարի չափը՝ համաձայնեցնելով լիազորված մարմնի հետ.
5) Սահմանել ներքոլեջային կրթաթոշակներ և դրանց տրամադրման կարգը,
6) քննարկել քոլեջի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերի նախագծերը.
7) տնօրենի առաջարկությամբ քննարկել և առաջադրել պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունները:

81. Խորհրդի անդամներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով, խուսափեն անձնական և Ընկերության շահերի միջև իրական և հնարավոր բախումներից:

82. Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները, խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

83. Խորհրդի նախագահը չի կարող Ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել: Խորհրդի նախագահի բացակայության դեպքում Նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

84. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.
2) գումարում է խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք.
3) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.
4) նախագահում է ժողովներում, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

85. Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գործադիր մարմնի, ինչպես նաև կանոնադրությամբ սահմանված այլ անձանց պահանջով: Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ: Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) ընդունել որոշումներ, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

86. Խորհրդի նիստերը իրավազոր են, եթե նիստին ներկա են խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը: Եթե խորհրդի անդամների թիվը նվազում է կանոնադրությամբ սահմանված թվի կեսից, ապա Ընկերությունը պետք է այն լրացնելու նպատակով արտահերթ ժողով գումարի, որի մասին որոշումը կայացնում է խորհուրդը: Այդ, ինչպես նաև ժողովի գումարմամբ պայմանավորված այլ որոշումներից բացի, խորհուրդն այլ որոշումներ ընդունելու իրավունք չունի:

87. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե օրենքով, կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Սույն կանոնադրության 79-րդ կետի 19-րդ ենթակետերով սահմանված հարցերի մասին որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների երեք քառորդով: Իսկ 79-րդ կետի 15-րդ ենթակետով սահմանված հարցի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Լիազորված մարմնի կողմից սահմանված կարգի համաձայն:

88. Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն 1 ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում: Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

89. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝

1) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
2) նիստին ներկա անձինք.
3) նիստի օրակարգը.
4) քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները.
5) նիստում ընդունված որոշումները:

Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

90. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը՝ Ընկերության տնօրենը:

91. Տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ օրենքով և կանոնադրությամբ ժողովի և խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:

92. Ընկերության տնօրենը կազմակերպում է ժողովի և խորհրդի որոշումների կատարումը:

93. Ընկերության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի նպաստ Ընկերության: Նա պարտավոր է Ընկերության բաժնետիրոջ պահանջով

հատուցել իր կողմից Ընկերությանը պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ Օրենքով կամ պայմանագրով:

94. Ընկերության տնօրենը՝

1) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.
2) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
3) գործում է առանց լիազորագրի.
4) տալիս է լիազորագրեր.
5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
6) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
7) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.
8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
9) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.
10) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:
11) իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

95. ՀՀ կառավարության 2005 թվականի **հունվարի 25-ի N 224-Ն որոշմամբ հաստատված** հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) ընդհանուր կարգով սահմանվում են ընկերության տնօրենի ընտրության (նշանակման) պայմանները, ինչպես նաև դրանց ներկայացվող ընդհանուր որակական և մասնագիտական պահանջները:

XI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

96. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն ընտրում է Ընկերության վերստուգող հանձնաժողով:

97. Վերստուգող հանձնաժողովը հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարումը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը:

98. Վերստուգող հանձնաժողովի գործունեության կարգը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատվող ներքին փաստաթղթով վերստուգող հանձնաժողովի կանոնակարգով:

99. Վերստուգող հանձնաժողովը իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչպես նաև լիազորված մարմնի պահանջով:

100. Վերստուգող հանձնաժողովը ստուգումների արդյունքները ուղարկում է Ընկերության ընդհանուր ժողով: Վերստուգող հանձնաժողովն ըստ տարեկան հաշվետվության և հաշվեկշռի կազմում է եզրակացություն: Առանց այդ եզրակացության Ընկերության հաշվեկշիռը ենթակա չէ հաստատման ընդհանուր ժողովի կողմից:

101. Վերստուգող հանձնաժողովն իրավունք ունի պահանջել Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարում:

102. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, դրա առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

103. Վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը) ընտրվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից 3 տարի ժամկետով: Վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը) հաշվետու են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին:

104. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության կամ վճարվող փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ:

105. Վերստուգող հանձնաժողովի անդամ (վերստուգողը) կարող են լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված, բաժնետիրոջ կամ հիմնադրամի կողմից լիազորված ֆիզիկական անձինք: Վերստուգող հանձնաժողովի նախագահն ընտրվում է վերստուգող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

106. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ վերստուգիչ հանձնաժողովի իրավասությունները կարող են դրվել վերստուգողի վրա:

107. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավել Ընկերության կամ Լիազորված մարմնի հետ գույքային շահերով չկապված աուդիտորի (կազմակերպության կամ ֆիզիկական անձ): Ընկերության աուդիտն իրականացնող անձն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքում ներկայացնում է գրավոր եզրակացություն:

108. Ընկերության աուդիտն իրականացնող անձը հաստատվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքվում է Ընկերության տնօրենի կողմից, իսկ աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարող գումարի չափը՝ որոշվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

109. Ընկերության ֆինանսական և տնտեսական գործունեության ստուգումը կարող է իրականացվել նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսական և այլ լիազորված մարմինների, հսկողական ծառայությունների կողմից՝ իրենց իրավասության սահմաններում:

X. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

110. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը տեղի է ունենում Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է ժողովին մասնակցած քվեարկող բաժնետերերի ձայների 3/4- ով, իսկ կանոնադրական կապիտալի չափի մեծացման հետ կապված դեպքերում ձայների մեծամասնությամբ:

111. Ընկերության կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց պետական գրանցման պահից, իսկ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում պետական գրանցումն իրականացնող մարմնին ծանուցելու պահից: Սակայն Ընկերությունը և նրա բաժնետերերը նման փոփոխությունները հաշվի առած երրորդ անձանց հետ ունեցած հարաբերություններում իրավունք չունեն վկայակոչել այլ փոփոխությունների գրանցման բացակայությունը:

XI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

112. Ընկերությունը բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել:

113. Եթե լուծարվող ընկերության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

114. Ընկերության վերակազմակերպման և լուծարման այլ հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման ու լուծարման կարգը սահմանվում են Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով:

115. Ընկերության լուծարումը հանգեցնում է Ընկերության դադարմանը առանց Ընկերության իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցման:

116. Ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը կայացնում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների ոչ պակաս քան 2/3-ով:

117. Լուծարային հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկվեն լիազորված մարմնի ներկայացուցիչներ:

118. Լուծարման հանձնաժողով կազմելու պահից նրան են անցնում Ընկերության գործերի կառավարման բոլոր լիազորությունները: Լուծարվող Ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

119. Նախքան լուծարման մասին որոշում ընդունելը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է հաստատի տնօրենի կողմից ներկայացված ամփոփիչ հաշվեկշիռն ու Ընկերության լուծարման նախագիծը:

120. Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (այդ թվում՝ լուծարման հանձնաժողովի կազմը) ենթակա են գրանցման իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում:

121. Լուծարումն իրականացվում է Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

122. Ընկերությունը, բացառությամբ այլ իրավաբանական անձի միացման ձևով վերակազմակերպման դեպքի, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման պահից:

123. Ընկերության այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս, նրանք վերակազմակերպված են համարվում միացող Ընկերության գործունեությունը դադարելու վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից:

124. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: